

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН	7
Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար - ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱ-ԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵՂԱԿԱՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈՒՄ	22
Vigen Tsatryan, Ruslan Kobzar - TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGHT OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES.....	22
Արգիշտի Վարդանյան - ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՂՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇՁԳՐՏՈՒՄ	23
Аргишти Варданян - ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ	29
Argishti Vardanyan - A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY	29
Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲԼԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ	30
Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ.....	38
Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16 TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....	38
Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱԴԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՈՈՄԻ ՊԻՈՒՄ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՉՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ	39
Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX	54
Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI" ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER.....	55
Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱՃ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....	56
Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.)	72
Novik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAK-SUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905).....	73
Գայանե Հովհաննիսյան - ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ.	74
Гаяне Оганнисян - ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. - В 1930-Х ГГ.....	82
Gayane Hovhannisyan - DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S - IN THE 1930S.....	83
Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....	84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.)	89
Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994)	89
Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՐԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՐԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	90
Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ	95
Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY	95
Լիլիթ Սալպարյան – ԶԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)	96
Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)	103
Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS)	103
Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍԱՍՅԱԿԱՆԵՐՈՒՄ ... 104	
Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА	113
Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY	114
Էդգար Չախոյան – ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1991-2019 ԹԹ.)	115
Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.)	134
Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019)	135
 ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY	
Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԱՆԻԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՍ - XX ԴԱՐԻ ՍԿԻՉԲ)	136
Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.)	146
Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY)	147
Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՉԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻԱՍԻ ՓՆՏՐՏՈՒԹՅՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ	148
Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО.	155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՇԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-րդ դարի խաչքարերի շարքաշեղծությունները..... 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА..... 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES)..... 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ԶԱՂԱԹԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻՉԱՅՆԸ..... 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA “НОКТЕМБЕР” IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼԼԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՍՈՒԼԻ ԱԶԵՐԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ’S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI..... 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱՇՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.... 188

Марине Геворкян, Гаяне Товмасын – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ..... 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ “ИСТОРИЯ АРМЕНИИ” КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ..... 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSIS’ “HISTORY OF THE ARMENIANS” 205

Վահագն Հակոբյան – ԴՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՍՎԱԿՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА..... 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN’S LETTERS..... 218

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան – ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԸՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԿԵՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ)..... 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH)..... 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD..... 236

Արմեն Խաչիկյան - ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒՃԵՐՈՒՄ..... 237

Армен Хачикян - ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan - MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES..... 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈԿՍԻՍՅԱՆ, ՄԻԶԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲԱՂԱԲՅՈՒՐՆԵՐԻ ԶՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷԶ:.....

247

ՀՈԿՆԱՆ ԶԱՆՅԱՆ (ՀՈԿՀԱՆՆԵՍ ԱՂԱԶԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈԿ, ԵՐ., ԷՂԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷԶ:.....

247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՉ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐԶԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷԶ:.....

250

ՆՈՐ ԳԻՐԶ ԵՐԿՐՈՐԴ ԱԾԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Յ. Գ. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ-ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.)..

252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱԿՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼԵՈՆՅԱՆ.....

255

ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ.....

258

ՀԱԿԵՐԺԻ ԵԱՍՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021).....

263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Գայանե Հովհաննիսյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – 1930-ԱԿԱՆ ԹԹ.

Հիմնաբառեր. Ժողովրդագրական գործընթացներ, արդյունաբերականացում, կոլեկտիվացում, վարչատարածքային փոփոխություն, վերաբնակեցում, արտագաղթ, ժողովրդագրական հետևանքներ:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական գործընթացները 1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ.: Հետապոտության խնդիրներն են ուսումնասիրել ինքնավար մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող հիմնական գործոնները, դրանց հետևանքները և սպեցիալությունը ժողովրդագրական գործընթացների վրա: Հետապոտության իրականացման ընթացքում կիրառել ենք ժամանակի սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի, մամուլի և այլ նյութերի համադրման, վերլուծության, համեմատության մեթոդները:

Ուսումնասիրելով թեման՝ եկել ենք եզրակացության, որ 1920-ական թթ. երկրորդ կեսին - 1930-ական թթ. ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացները հետևանք էին մի կողմից ադրբեջանական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության, մյուս կողմից՝ ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական գործընթացների: Հիշյալ ժամանակաշրջանում մարզի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները խմբավորվում են երկու մասի. առաջին խումբը կազմում են ադրբեջանական իշխանությունների կողմից իրականացված այնպիսի ձեռնարկումները, ինչպիսիք են վարչատարածքային փոփոխությունների միջոցով մարզի տարածքի կրճատումը, թյուրքական բնակավայրերի ձևավորումը, քոչվորական կացութաձևի վերացման և նստակեցության հաստատմանն ուղղված միջոցառումները, տնտեսական «հիմնավորումներով» մարզի հայ բնակչության վերաբնակեցումները և հավաքագրումները, մարզի սոցիալ-տնտեսական վարձագան նպատակաուղղված դանդաղեցումը: Գործոնների երկրորդ խումբը ներառում է ամբողջ խորհրդային Միությունն ընդգրկած սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացները: Դրանք էին արդյունաբերականացման, կոլեկտիվացման գործընթացները, 1930-ական թթ. վերջերին ծավալված զանգվածային բռնաճնշումները:

Մուտք

ՌԿ(ք)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 5-ի ոչ օրինական, ազգերի ինքնորշման սկզբունքին և երկրամասի էթնիկական կազմին հակասող որոշման համաձայն՝ հայկական Արցախը միացվեց խորհրդային Ադրբեջանին՝ մարզային լայն ինքնավարության իրավունքով: Չնայած ադրբեջանական իշխանությունների նպատակաուղղված երկամյա հետաձգումներին, այնուամենայնիվ, հայկական կողմի համառ ջանքերի շնորհիվ Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար մարզ առանձնացնելու որոշումը կյանքի կոչվեց Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի 1923 թ. հուլիսի 7-ի հրամանագրով¹: Լավ գիտակցելով մարզի ժողովրդագրական կազմի փոփոխության կարևորությունը:

* Հոդվածը ներկայացվել է 04.06.2021 թ., գրախոսվել՝ 04.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

¹ Մանրամասն տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 120-124:

նը՝ ինքնավար մարզի կազմավորումից անմիջապես հետո ադրբեջանական իշխանությունների կողմից կիրառվեցին ժողովրդագրական անուղղակի քաղաքականության այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք էին վարչատարածքային տարաբնույթ փոխակերպումների հետևանքով խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև անմիջական սահմանակցության բացառումը՝ կասեցնելու համար բնակչության հնարավոր տեղաշարժերը այդ երկու տարածքների միջև, համախումբ թյուրքական տարրի առանձնացումը՝ Շուշիի շրջանի ստեղծմամբ, Շուշի քաղաքից ինքնավար մարզի կենտրոնի տեղափոխումը՝ կանխելու համար հայ բնակչության հնարավոր վերադարձը քաղաքի ավերված հայկական հատված, մարզում սոցիալ-տնտեսական խտրական քաղաքականության իրագործումը¹:

1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ. խորհրդային Ադրբեջանի կողմից հետևողականորեն շարունակվում էր մարզի հայաթափման ժողովրդագրական քաղաքականությունը: Այդ նպատակով իշխանությունները շարունակում էին ինչպես նախկինում սկսված ձեռնարկումները, այնպես էլ կիրառում էին նոր եղանակաձևեր և գործիքակազմ:

ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները և դրանք պայմանավորող գործոնները 1920-ական թթ. երկրորդ կեսին – 1930-ական թթ.

Քննարկվող ժամանակաշրջանում մարզի ժողովրդագրական պատկերը համալիր գործընթացների հետևանք էր և պայմանավորված էր ինչպես ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող քաղաքականությամբ, այնպես էլ խորհրդային հասարակարգին բնութագրական գործընթացների ծավալմամբ: Անդրադառնալով ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների առաջին խմբին՝ պետք է նշել, որ այն 1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ. իր արտահայտությունը գտավ ադրբեջանական իշխանությունների այնպիսի ձեռնարկումներում, ինչպիսիք էին վարչատարածքային տարբեր փոխակերպումներով մարզի տարածքի կրճատումը, թյուրքաբնակ գյուղերի և ավանների ձևավորումը, դրանց տնտեսական և սոցիալական արտոնությունների տրամադրումը, տնտեսական պատճառաբանություններով հայ բնակչության վերաբնակեցումները Միլի և Մուղանի հարթավայրային շրջաններում, մարզից հավաքագրվող մեծաքանակ աշխատուժի տեղափոխումն ադրբեջանական արդյունաբերական շրջաններ, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակաուղղված դանդաղեցումը: Մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների երկրորդ խումբը վերաբերում է համամիութենական սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական գործընթացներին և ներառում է ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ը, այնպես էլ ինքնավար մարզն ընդգրկած կոլեկտիվացման, արդյունաբերականացման գործընթացները և 1930-ական թթ. երկրորդ կեսին ծավալված զանգվածային բռնաճնշումները:

Նախևառաջ անդրադառնանք մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող այն գործընթացներին, որոնք բնութագրական էին ամբողջ խորհրդային Միության համար: Ինչպես հայտնի է, 1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցան մի շարք գործընթացներ, որոնցից անմասն չէր կարող մնալ նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Մասնավորապես սոցիալիստական շինարարության, դրա նյութատեխնիկական բազայի ստեղծման համար խորհրդային Միությունը որդեգրեց երկրի արդյունաբերականացման քաղաքականությունը, ինչը ենթադրում էր մեքենայական արդյունաբերության ստեղծում և դրա հիման վրա գյուղատնտեսության վերակառուցում: 1925 թ. դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարը հաստատեց երկրի արդյունաբերականացման ծրագիրը, որի գլխավոր խնդիրը դարձավ նոր գործարանների և արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը՝ պետության համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի ծավալը մեծացնելու և

¹ Մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. սկզբներին, «Գիտական Արցախ», N 4 (7), 2020, էջ 16-23:

արդյունաբերական հասարակարգի ստեղծման նպատակով: Խորհրդային իշխանությունները միաժամանակ արմատական վերափոխումներ կատարեցին գյուղատնտեսության ոլորտում. 1927 թ. դեկտեմբերին որոշում ընդունվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին, ինչը ենթադրում էր ժամանակակից տեխնիկայի հիման վրա գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր սոցիալիստական տնտեսությունների մեջ, կուլակության՝ որպես ունևոր գյուղացիական դասակարգի վերացումը:

Ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ ինքնավար մարզում համատարած կոլեկտիվացման գործընթացն իրականացվեց լրջագույն թերություններով, կոպտորեն խախտվեց նրա կամավորության սկզբունքը, մի շարք վայրերում այն իրականացվեց վարչարարական եղանակով: Ինքնավար մարզում կոլեկտիվացման գործընթացը առավել լայն թափով ծավալվեց 1920-ական թթ. երկրորդ կեսից՝ իր զագաթնակետին հասնելով 1929-1930 թթ.: Մի շարք գյուղական համայնքներում (Աշան, Քոսալար, Խծաբերդ, Սոս, Մաճկալաշեն, Խնուշինակ, Մարտակերտ, Մինգրեյլ, Լևոն-Արխ) գործընթացը հանգեցրեց ունևոր գյուղացիների դիմադրությանը¹: Հատկապես կոպտագույն խախտումներ տեղի ունեցան միջակ գյուղացիության հանդեպ, փորձ արվեց վարչարարական եղանակով համատարած և հապշտապ ավարտել կոլեկտիվացման գործընթացը, ինչը հանգեցրեց բախումների, սպանությունների, անասունների զանգվածային սպանողի²: Կուլակաթափության գործընթացն ուղեկցվեց նաև գյուղացիության մի մասի արտաքսումով միության տարբեր աբսորվայրեր³: Կոլեկտիվացման գործընթացի կազմակերպման ընթացքում բացակայում էր հանրային տնտեսության ճիշտ կազմակերպման փորձը, չկային աշխատանքի կազմակերպման նոր ձևեր, կյուրակական շահագրգռվածության բարձրացման եղանակներ: Կոլեկտիվացման գործընթացի ժողովրդագրական հետևանքը ինքնավար մարզում հանդիսացան բռնությունների հետևանքով արտագաղթի ծավալների ընդլայնումը, գյուղական բնակչության մի մասի արտահոսքը դեպի քաղաքային բնակավայրեր:

Ինչ վերաբերում է մարզում արդյունաբերականացման քաղաքականությանը, ապա այն, իհարկե, այստեղ որոշակի դրսևորումներ ունեցավ⁴, սակայն այդ գործընթացը որևէ կերպ համեմատելի չէր Ադրբեջանի մյուս վարչամիավորների արդյունաբերականացման ծավալների հետ: Ինչպես հայտնի է, արդյունաբերականացումը ենթադրում էր նոր գործարանների, արտադրության նոր ձևերի և եղանակների ստեղծումը, ինչը դրական ազդեցություն կունենար մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս հեռանկարը բացառելու նպատակով էլ արդյունաբերականացման գործընթացը մարզի տարածքում դսրևորվեց անհամեմատ փոքր ծավալներով: Այն հիմնականում արտահայտվեց էներգետիկ հզորությունների կառուցմամբ, մետաքսագործարանային, գինու և սպիրտի արտադրության ծավալմամբ⁵: Արդյունաբերականացման գործընթացի ժողովրդագրական հետևանքը հանդիսացավ մարզի տարածքում քաղաքային բնակչության թվաքանակի աճը (հատկապես Ստեփանակերտ քաղաքում), հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունը, մասնավորապես բանվորների և ծառայողների թվաքանակի ավելացումը, ուրբանիզացիայի մակարդակի աճը:

Մարզն անմասն չմնաց նաև 1930-ական թթ. Խորհրդային Միությունում ծավալվող քաղաքական բռնաճնշումներից: Ինքնավար մարզում քաղաքական բռնաճնշումները զուգորդվեցին ազգային ճնշումներով և հալածանքներով: Այստեղ հայտնաբերվեցին ոչ միայն

¹ Տե՛ս Հովհաննիսյան Գ., *Հետամնաց ագրարային գավառից առաջավոր սոցիալիստական մարզ (Լեռնային Ղարաբաղի ինքնավարության իռչակման 40-ամյակի առթիվ)*, Բաթու, 1963, էջ 23:

² Տե՛ս Նույն տեղում, էջ 29-30:

³ Տե՛ս Նույն տեղում, էջ 41:

⁴ Մանրամասն տե՛ս Բարսե Ս., *Լեռնային Ղարաբաղ (Երկրագիտական համառոտ ձեռնարկ)* // *Արցախի ժողովրդագիտությունը: Ազգագրություն, Ստեփանակերտ, 2019, հատոր 2 (2), էջ 484-493:*

⁵ Մանրամասն տե՛ս Բալայան Վ., *Դրվագներ արցախահայության պատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.)*, Ստեփանակերտ, 2012, էջ 252, տե՛ս նաև *Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը*, Երևան, 1994, էջ 252-253, 270:

«դասակարգային թշնամիներ», այլև «հայկական դաշնակցական-ազգայնական խմբավորումներ», որոնք ներթափանցել էին Հայաստանից և «փորձում էին խարխլել ժողովուրդների բարեկամությունը»¹: Բռնաճնշումների առաջին թիրախում հայտնվեց մարզկոմը, աշխատանքից ազատվեցին և ձերբակալվեցին մեծաթիվ պաշտոնյաներ²: Ինքնավար մարզում բնաճնշումները հատկապես լայն թափ ստացան 1930-ական թթ. երկրորդ կեսից՝ Ադրբեջանի կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Միր Ջաֆար Բադիրովի անմիջական նախաձեռնությամբ: Հակահեղափոխական գործունեության, լրտեսության, հակախորհրդային քարոզչության կասկածանքի պատճառաբանությամբ ձերբակալվեցին կամ Միբիր ուղարկվեցին կուսակցական և ղեկավար բազմաթիվ աշխատողներ³: Բռնաճնշումներն առանձնահատուկ ուժգնությամբ դրսևորվեցին մարզի մտավորականության նկատմամբ⁴: Պատմաբան Շ. Մկրտչյանը Ստեփանակերտի մարզային երկրագիտական թանգարանում աշխատելիս (1965-1972 թթ.) փորձել է կազմել Բադիրովի կարգադրությամբ բռնաճնշումների ենթարկվածների թիվը: Ըստ նրա հաշվարկների՝ միայն գնդակահարված հայերի թիվը կազմել է 386 մարդ, որոնք եղել են կուսամարզկոմի, մարզգործկոմի նախկին ղեկավարներ, մարզային ու շրջանային ղեկավար աշխատողներ⁵: Մարզում ծավալված բռնաճնշումները, զուգորդվելով ազգային խտրական քաղաքականության հետ, խթանում էին հայ բնակչության լայնածավալ արտագաղթը:

Այսպիսով, համամիութենական սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ներկայացված գործընթացների ժողովրդագրական հիմնական հետևանքները հանդիսացան ինքնավար մարզի բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխությունը, քաղաքային բնակչության ավելացումը, ուրբանիզացիայի մակարդակի բարձրացումը, արտագաղթի աճը:

Քննարկվող ժամանակաշրջանում մարզի ժողովրդագրական գործընթացներում բնակչության թվաքանակի, էթնիկ կազմի փոփոխության տեսանկյունից առանցքային նշանակություն ունեւր ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող քաղաքականությունը: Հիշյալ շրջանում ամբողջ ծավալով գործադրության մեջ էին ադրբեջանական իշխանությունների կողմից մարզի ձևավորումից հետո սկզբնավորված ժողովրդագրական քաղաքականության մի շարք դրսևորումներ: Դրանցից առաջինը վերաբերում է մարզի տարածքի վարչական վերաձևումներին, դրանց միջոցով մարզի տարածքի կրճատմանը, էթնիկական պատկերի փոխակերպմանը: Մասնավորապես 1926 թ. Հադրուբի Հարար գյուղը բռնակցվեց Լաչինի շրջանին՝ առավել դժվարին դարձնելով Հայաստանի հետ սահմանային կապը⁶: Լաչինի շրջանին կցվեցին նաև սկզբնապես որոշակիորեն մարզի կազմում գտնվող Մուսուլմանլարի շրջանը՝ Հին Շեն, ճամբարախաչ, Իրչան, Այրակ (Ագարակ) և մի շարք այլ գյուղերով⁷: Դադիվանքի (Խոթավանք) վանական համալիրը և նրան կից Մեսրոպյանի հայկական գյուղն անջատվեցին Ջրաբերդի (Մարտակերտի) շրջանից և միացվեցին Զյալբաջարի (Զարվաճառ) շրջանին, Մարտունու շրջանի Աբդալ գյուղը միացվեց Ադրամի շրջանին և այլն⁸:

Հետագա տարիներին ևս շարունակվում էր մարզի հայկական գյուղերը հարևան ադրբեջանական շրջաններին բռնակցման գործընթացը: Մասնավորապես 1936 թ. Հադրուբի

¹ Տե՛ս Աբրահամյան Շ., Ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին, Երևան, 2003, էջ 27:

² Տե՛ս Խույն տեղում, էջ 28; տե՛ս նաև Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 215-216; Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ: Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003, էջ 78-79:

³ Մանարամյան տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 210-211, 265; տե՛ս նաև Աբրահամյան Շ., նշվ. աշխ., էջ 39:

⁴ Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 213, 215-216, 265:

⁵ Տե՛ս Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 80:

⁶ Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 181:

⁷ Տե՛ս Խաչատրյան Վ., Սուբխայան Յ., Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 141:

⁸ Տե՛ս Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 73-74:

շրջանի Ողեր գյուղը միացվեց Կարյազինոյի (հետագայում՝ Ֆիզուլի) շրջանին՝ այդպիսով կտրելով Հադրութ-Տոլ ուղղությամբ գյուղերն իրար կապող ճանապարհը¹: Դրա փոխարեն մարզի հայկական շրջաններում հայտնվեցին թյուրքական գյուղեր, օրինակ՝ Մարտունիի շրջանի Վերին Վեյսալու և Մարտակերտի շրջանի Աղդաբան գյուղերը, որոնցից առաջինը գտնվում էր ադրբեջանական Ֆիզուլի, իսկ երկրորդը՝ Բյալբաջարի շրջանի ենթակայության տակ²:

Բացի վարչական փոխակերպումների միջոցով հայկական տարածքների յուրացումից՝ հիշյալ ժամանակաշրջանում իշխանությունների կողմից ակտիվորեն իրականացվում էր մարզը թյուրքերով բնակեցնելու և թյուրքական բնակավայրերի ձևավորման քաղաքականությունը: Ադրբեջանի կառավարությանն առընթեր ձևավորվել էր հատուկ հանձնախումբ, որը զբաղվում էր մարզի տարածքում թյուրքական բնակավայրերի ստեղծմամբ՝ նախապես ուսումնասիրելով դրանց աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները, հնարավոր քաղաքական զարգացումները³: Ընդ որում՝ բնակավայրերի ստեղծման ընթացքում իշխանությունները վերջիններիս ֆինանսական, սոցիալական և տնտեսական արտոնություններ և աջակցություն էին ցույց տալիս: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներով դուրս ենք բերել 1921-1931 թթ. ընթացքում ինքնավար մարզի տարածքում թյուրքերով բնակեցված կամ առաջացած հետևյալ բնակավայրերը⁴:

- Ստեփանակերտի շրջան (նախկին Խաչենի շրջան) – Բյոսալար, Ջանհասան, Տարիֆդաշ, Ջավադլար, Յալ-Օբա, Դարալագյազ, Կրկժան գյուղերը, Սունջինկա ավանը:
- Ջրաբերդի շրջան (Մարդակերտի շրջան) - Նարիշտար գյուղը, Օրթա Գյունեփայա, Բաշ Գյունեփայա, Խաթիբեյի, Բաբալար, Բաշիրլար, Գարաշլար, Գարալար ավանները, Չարեքտար գյուղը (վերջինս 1921 թ. գյուղական մարդահամարի տվյալներով բնակեցված էր քրդերով, իսկ 1931 թ.՝ թյուրքերով):
- Շուշիի շրջան - Ղայբալիբենդ (Վեյբալիբենդ) գյուղը՝ Լաչինլար, Չաման-Փայա, Միրզալար, Շուշիի ավաններով, Շիրլան գյուղը՝ Սամիշլար, Սաֆիխանլար, Խանլիխ-Փայա, Ալլախկուլիլար, Խանալի, Իմանլար ավաններով, Կիշլադ, Կուլլար, Ափաթի գյուղերը:
- Մարտունիի շրջան (նախկին Վարանդա) - Կարադաղլի, Ամիրլար, Բախրամլի գյուղերը:

Անհամեմատ փոքրաթիվ էին հիշյալ ժամանակաշրջանում մարզի տարածքում առաջացած հայաբնակ բնակավայրերը: Դրանց շարքին էին դասվում Մարտունի (նախկին Խոնաշեն, 1931 թ. դրությամբ 855 բնակիչ), Մարտակերտի շրջանի Կարմիրավան (469 բնակիչ), Մարտունու շրջանի Կարմիր շուկա գյուղերը (197 մարդ):

Անհրաժեշտ է ընդգծել, որ քննարկվող ժամանակաշրջանում ադրբեջանական իշխանությունների կողմից ակտիվորեն իրականացվում էր մարզում քոչվորական կացութաձևի վերացման, թյուրք բնակչության նստակեցության անցման և այդ նպատակով նրանց ֆինանսական և տնտեսական աջակցության տրամադրման քաղաքականությունը: 1930-ական թթ. սկզբներին ադրբեջանական իշխանություններն այդ ուղղությամբ դիմեցին մի շարք գործողությունների: Մասնավորապես, քննարկվող ժամանակաշրջանի արխիվային

¹ Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 181:

² Տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև Մկրտչյան Շ., նշվ. աշխ., էջ 74:

³ Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 237:

⁴ Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ սկզբնաղբյուրների հիման վրա. *Памятная книга Елизаветпольской губернии: Приложение к памятной книге Елизаветпольской губернии на 1914 год: Таблица об экономическом состоянии городского крестьянского населения, по сведениям, относящимся к 1912 году, собранным Начальниками полиций и Мировыми Посредниками Елизаветпольской губернии, Тифлис, 1914, էջ 2-170; Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991, էջ 11-20; Արցախի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 3, ց. 1, կապ 1, գ. 19, թ. 1-51 (ԼՂԻՄ բնակավայրերի ցանկը ըստ բնակչության թվաբանակի և ազգությունների 1931-1932 թթ.):*

փաստաթղթերից մեկում նշված է, որ կառավարության կողմից լայնածավալ աշխատանքներ պետք է իրականացվեն քոչվորներին նստակյաց կյանքի անցկացնելու նպատակով¹: Գործընթացը ցայտուն դրսևորվեց Շուշիի շրջանի Չարիսի թյուրքական գյուղում, որի բնակիչները, քոչվորական կյանքից անցում կատարելով նստակեցության, մարզային իշխանություններից պահանջում էին աջակցության տրամադրում: Ի պատասխան, 1932 թ. օգոստոսին, ընդգծելով քոչվորական նստակեցության վերացման կարևոր տնտեսական և քաղաքական նշանակությունը, մարզգործկոմը որոշում է Չարիսի գյուղին տրամադրել հողային տիրույթներ հայկական բնակավայրերի հաշվին: Ավելին՝ նախատեսվում էր վերաբնակեցման ֆոնդից մարզի քոչվորական տնտեսություններին նստակեցության անցման համար տրամադրել համապատասխան գումարներ²: Մարզի տարածքում քոչվորական կացութաձևի վերացման և թյուրք բնակչության նստակեցության անցման օրինակներից է նաև Շուշիի շրջանի Ափաթի գյուղը, որը, 1921 թ. վիճակագրական տվյալների համաձայն, քոչվորական, իսկ արդեն 1931 թ.՝ գյուղական բնակավայր էր՝ 164 թյուրք բնակչով:

Քննարկվող ժամանակաշրջանում մարզի ժողովրդագրական պատկերի վրա կարևոր ազդեցություն ունեցող հաջորդ գործոնը մարզի բնակչության աշխատունակ և երիտասարդ հատվածի՝ կազմակերպված արտահոսքն էր Ադրբեջանի տարբեր շրջաններ: Արցախի Հանրապետության պետական արխիվում պահպանվել են հիշյալ շրջանում ադրբեջանական իշխանությունների կողմից մարզի բնակչությանը Մուղան և Միլլի հարթավայրեր վերաբնակեցնելու մասին մի շարք փաստաթղթեր: Ընդ որում՝ այս գործընթացը կազմակերպվում էր վերոհիշյալ շրջանները տնտեսապես յուրացնելու և աշխատուժի պակասի «հիմնավորմամբ»: Մասնավորապես ԽՍՀՄ ժողկոմխորհի 1930 թ. նոյեմբերի 14-ի հրամանով առաջարկվում էր Ադրբեջանի բոլոր մարզգործկոմներին և մարզկուսկոմներին բացահայտել սակավահող շրջանների վերաբնակեցվող հավաքակազմին՝ վերջիններիս Մուղանի և այլ դաշտավայրերի ոռոգելի բամբակագործարանային շրջաններում բնակեցնելու նպատակով³: 1931 թ. գարնանը նախատեսված էր Մուղանի հողաբարելավմանը ենթարկված տարածքներում տեղավորել 3.500 տնտեսություն՝ նրանց կողմից նույն տարում 7 հազար հեկտար բամբակի մշակման համար⁴: ԽՍՀՄ կառավարության հրամանի հիման վրա «սակավահողության վերացման, բամբակագործության զարգացման, ինչպես նաև բամբակային շրջաններում քոչվոր և կիսաքոչվորային տնտեսաձևի վերացման նպատակով» 1930 թ. դեկտեմբերի և 1931 թ. հունվարի Ադրբեջանի հողժողկոմի հրամանագրերով առաջարկվում է տեղերում բացահայտել և տեղեկություններ հայտնել վերաբնակեցվողների թվի մասին⁵: 1931 թ. մայիսին ԼՂԻՄ հողժողկոմի պատասխան նամակից պարզ է դառնում, որ Ադրբեջանի Աղջաբեդի շրջանում գտնվող Գյավուր-Արիս բնակավայրում (Միլլի հարթավայր) պետք է վերաբնակեցվեին մարզի Մարտունու շրջանի Դուզե-Կալեր գյուղից 18 տնտեսություն (52 մարդ)⁶: Մեկ այլ վավերագրի համաձայն՝ մարզի Դիզակի գավառի Ջիլան գյուղից Մուղանի շրջան պետք է վերաբնակեցվեին 4 հայ ընտանիք՝ ընդհանուր 22 շունչ⁷: Արխիվային մի շարք փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ վերաբնակեցումները կանոնակարգված բնույթ են կրել՝ ունենալով հստակ նախորդված և պլանավորված ծավալներ և ժամանակացույց⁸: Հատկանշական է, որ ադրբեջանական կառավարությունը վերաբնակեցվողներին խոստանում էր նաև կյուրթական աջակցություն տրամադրել⁹: Վերաբնակեցումների ծավալների մասին կարելի է պատկերացում

¹ Տե՛ս Արցախի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 3, ց. 5, գ. 13, թ. 4-5:

² Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 238:

³ Տե՛ս Արցախի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 3, ց. 1, գ. 10, թ. 9:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 11:

⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 3:

⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 17:

⁹ Տե՛ս Աբրահամյան Շ., նշվ. աշխ., էջ 19:

կազմել ԼԴԻՄ մարզխորհրդի 4-րդ համագումարի նյութերից, որտեղ Մարտունու շրջանի պատգամավորներից մեկը, դատապարտելով մարզի բնակչության վերաբանկեցումը Միլի և Մուղանի հարթավայրային շրջաններ, նշում էր, որ Դիզակի շրջանից արդեն իսկ վերաբնակեցրել են 132 ընտանիք¹: Հետագա տարիներին տնտեսապես նոր յուրացվող շրջաններ հայ բնակչության վերաբնակեցումներին փոխարինելու եկան աշխատուժի զանգվածային հավաքագրումները: Մասնավորապես Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և Ժողկոմխորհի 1936 թ. օգոստոսի 23-ի որոշմամբ աշևանային ամիսներին Ադրբեջանի բամբակացան շրջաններին մարզը տրամադրեց 4200 բանվոր²:

Ադրբեջանում ծավալվող արդյունաբերականացման գործընթացը և բանվորական ուժի պակասը դարձավ հաջորդ «հիմնավորումը», որով ադրբեջանական իշխանությունները իրականացնում էին մարզի գյուղական բնակչության, հիմնականում երիտասարդների զանգվածային հավաքագրումը՝ նրանց Բաքվի, Գանձակի (1935 թվականից՝ Կիրովաբադ) և այլ շրջաններում աշխատանքի ուղարկելու համար: Մասնավորապես 1933 թ. հունիսին Բաքվում աշխատելու համար մարզից հավաքագրվեց 1325 մարդ³: Նախատեսված էր, որ նույն թվականին մարզը Ադրբեջանի նավթային արդյունաբերության պետական միավորմանը պետք է տրամադրեր ևս 1300 բանվոր⁴: 1936 թ. հունիսին մարզգործկոմի նախագահի տեղակալ Մամեդովը հրահանգում է շրջագործկոմի նախագահներին բանվորներ հավաքագրել: Նախատեսվում էր Ստեփանակերտի շրջանից հավաքագրել 244, Դիզակի շրջանից՝ 354, Շուշիի շրջանից՝ 151, Մարտունու շրջանից՝ 322 բանվոր, և ուղարկել Բաքվի շինհրապարակներ⁵: Հետագա տարիներին գործընթացը շարունակվեց՝ հասնելով ընդհուպ նախապատերազմյան շրջան: 1940 թ. մարտին 400 բանվորներ ուղարկվեցին Ջուլֆայի երկաթուղին կառուցելու, իսկ 200-ը՝ Բաքվում աշխատելու համար⁶: Նույն թվականին մարզի կոլտնտեսականների ուժերով, առանց վարձատրության, կառուցվեց Եվլախ-Ստեփանակերտ երկաթգիծը⁷: 1941 թ. հունիսի 6-14-ն ընկած ժամանակահատվածում մարզից Բաքու են ուղարկվում 2218 երիտասարդ բանվորներ⁸: Նույն թվականի հունիսի 12-ին Ադրբեջանի Ժողկոմխորհի հեռագիրը մարզգործկոմից պահանջում էր ևս 300 երիտասարդներ N 446 գործարանի կառուցման համար⁹:

Մարզի բնակչության վերաբանակեցումների, աշխատուժի հավաքագրումների Ժողովրդագրական հետևանքներից մեկը մարզի բնակչության թվաքանակի աստիճանական փոփոխությունն էր: Ինչպես վերաբնակեցվող, այնպես էլ որպես աշխատուժ օգտագործվող բնակչության մեծ մասը այլևս չէր վերադառնում իրենց բնակության նախկին վայրեր և մշտական բնակության էր անցնում նոր բնակավայրերում (հիմնականում քաղաքներում): Ադրբեջանական իշխանությունների նմանօրինակ քաղաքականության Ժողովրդագրական հաջորդ հետևանքը մարզի բնակչության սեռատարիքային կազմի աստիճանական փոփոխությունն էր: Քանի որ վերաբնակեցվող և որպես աշխատուժ օգտագործվող հավաքակազմի մեծագույն մասը կազմում էին բնակչության վերարտադրողական տարիքի երիտասարդները, հետևաբար վերջինիս արտամղումը մարզից հանգեցնելու էր բնակչության սեռատարիքային կազմի աստիճանական փոփոխությանը, ինչը, իր հերթին, ազդելու էր բնական աճի և բնակչության վերարտադրողական ցուցանիշների վրա:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 20:

² Տե՛ս Բալայան, Վ., նշվ. աշխ., էջ 233:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Աբրահամյան Շ., նշվ. աշխ., էջ 40:

⁵ Տե՛ս Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 232-233:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 233:

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս Աբրահամյան Շ., էջ 41:

⁹ Տե՛ս նույն տեղում:

Ինչ վերաբերում է տնտեսական տարաբնույթ «հիմնավորումներով» մարզից հեռացող բնակչության ազգային կազմին, ապա, հարկ է նկատել, որ պահպանված տեղեկությունները վերաբերում են գերազանցապես հայ բնակչությանը: Եթե հաշվի առնենք, որ քննարկվող ժամանակաշրջանում մարզի թյուրք բնակչությանը իշխանությունների կողմից տրվում էին բազմաթիվ տնտեսական, հարկային, ֆինանսական և հողային առանձնաշնորհումներ, իսկ թյուրքական բնակավայրերն աչքի էին ընկնում իրենց բարեկեցությամբ, ապա սկզբնադրյուններում թյուրք բնակչության վերաբնակեցումների կամ հավաքագրումների վերաբերյալ տվյալների բացակայությունը պետք է բնականոն համարել: Հետևաբար «տնտեսական հիմնավորումներով» մարզի բնակչության վերաբնակեցումների ժողովրդագրական հետևանքներից երևան էթնիկ պատկերի աստիճանական փոփոխությունը:

Մարզի ժողովրդագրական գործընթացների վրա ազդող հաջորդ կարևոր գործոնը սոցիալ-տնտեսական ծանր դրությունն էր և դրա հետևանքով շարունակական ընթացք ստացած լայնածավալ արտագաղթը: Այս իրավիճակը բնութագրական էր մարզին դեռևս 1920-ական թթ.՝ ինքնավարության ստեղծման առաջին տարիներից, որն էլ և հանդիսանում էր այդ ժամանակ մարզի հայ բնակչության արտագաղթի հիմնական պատճառը: Քննարկվող ժամանակաշրջանում մարզի սոցիալ-տնտեսական դրության շարունակական վատթարացումը պայմանավորված էր իշխանությունների ուղղորդված ու նպատակամղված տնտեսական քաղաքականությամբ: Իհարկե, ամբողջ Խորհրդային Միությունն ընդգրկած սոցիալ-տնտեսական գործընթացներին համահունչ, ինքնավար մարզում ևս որոշակի աշխատանքներ կատարվեցին այս ոլորտում (մասնավորապես հացահատիկային, բանջարանոցային բույսերի, բամբակի մշակության, ոռոգման, անասնաբուծության, փայտամշակման, գորգագործության, յուղապանրային արտադրության բնագավառներում¹) սակայն, դրանք բավարար չէին մարզի սոցիալ-տնտեսական դրության կայունացման և զարգացման համար: Մարզի գյուղատնտեսության ոլորտում առկա էին մի շարք խնդիրներ պիտանի հողատարածությունների, սակավահողության, ոռոգման, երաշտի, գյուղմթերքների իրացման, բերքատվության, տեխնիկական հագեցվածության, հարկային ծանրաբեռնվածության հետ կապված²: Բացի այդ, չնայած արդյունաբերականացման քաղաքականությանը բնութագրական նոր գործարանների կառուցմանը և արտադրատեսակների զարգացմանը, ինչպես նշվել է, մարզի տարածքում այս գործընթացը նպատակաուղղված կերպով լիարժեքորեն չիրականացվեց: Այն արտահայտվեց ընդամենը երեք տասնյակ փոքր գործարանների ու արտադրամասերի կառուցմամբ³:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի, ոչ բարվոք կենսապայմանների, ազգային խտրական քաղաքականության և ճնշումների անմիջական հետևանքն էր հայ աշխատունակ բնակչության շարունակական զանգվածային արտագաղթը դեպի Բաքու և Ադրբեյջանի արդյունաբերական այլ կենտրոններ: Հայ բնակչության մի սովոր հատված էլ ապաստան էր գտնում Հյուսիսային Կովկասում⁴: Ժամանակավոր սեզոնային արտագաղթը հաճախ վերածվում էր մշտական բնակության վայրի՝ այդպիսով փոփոխության ենթարկելով մարզի բնակչության թվաքանակը: Իսկ քանի որ արտագաղթողների մեծագույն հատվածը հայ բնակչությունն էր, ապա այն առաջին հերթին խթանում էր մարզի բնակչության էթնիկ կազմի փոխակերպմանը:

¹ Մանրամասն տե՛ս Բարսե, *նշվ. աշխ.*, էջ 484-511; տե՛ս նաև Аракелян А., *Автономный Нагорный Карабах, "Революция и национальность"*, N 11, 1936, էջ 54-55:

² Մանրամասն տե՛ս Բալայան Վ., *նշվ. աշխ.*, էջ 224-227; տե՛ս նաև Աբրահամյան Շ., *նշվ. աշխ.*, էջ 33-34; Մկրտչյան Շ., *նշվ. աշխ.*, էջ 89:

³ Տե՛ս Մկրտչյան Շ., *նշվ. աշխ.*, էջ 94:

⁴ Տե՛ս Խաչէնցի, *Ղարաբաղի դրությունը, «Դրոշակ», 1928, N 12, էջ 334:*

Եզրակացություն

Ամփոփելով ներկայացված փաստերը և կատարված ուսումնասիրությունը՝ հանգում ենք եզրակացության, որ 1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ. ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացները հետևանք էին մի կողմից ադրբեջանական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության, մյուս կողմից՝ խորհրդային Միության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական գործընթացների: Հիշյալ ժամանակաշրջանում մարզի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները խմբավորվում են երկու մասի. առաջինը ադրբեջանական իշխանությունների կողմից մարզի կազմավորումից հետո սկզբնավորված և շարունակական ընթացք ստացած եթևիկ փոխակերպման քաղաքականությունն էր՝ նոր դրսևորումներով և կենսագործման եղանակներով: Այս խմբի մեջ էր մտնում վարչատարածքային ձևակերպումների միջոցով մարզի տարածքի կրճատումը, թյուրքական բնակավայրերի ձևավորումը, վերջիններիս սոցիալ-տնտեսական արտոնությունների հատկացումը, քոչվորական կացութաձևի վերացման և նստակեցության հաստատմանն ուղղված միջոցառումները, տնտեսական «հիմնավորումներով» մարզի հայ բնակչության վերաբնակեցումները և հավաքագրումները, հայ բնակչության երիտասարդ հատվածի արտամղումը, ազգային ճնշումները և խտրական քաղաքականությունը, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակաուղղված դանդաղեցումը: Գործոնների երկրորդ խումբը կապված էր համամիութենական սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացների հետ, որոնք իրագործվում էին ամբողջ խորհրդային Միությունում և բնութագրական էին նաև ինքնավար մարզի համար: Դրանք էին կոլեկտիվացման, արդյունաբերականացման գործընթացները, 1930-ական թթ. վերջերին զարգվածային բռնաճնշումները: Այս երկու խմբերն առանձնանում էին նաև մարզի ժողովրդագրական գործընթացների վրա իրենց ունեցած ազդեցության տարբերությամբ: Եթե երկրորդ խմբի գործոններն առավելապես ազդում էին մարզի բնակչության սոցիալական կառուցվածքի, քաղաքային բնակչության ավելացման և ուրբանիզացիայի մակարդակի վրա, ապա գործոնների առաջին խումբը միտված էր մարզի եթևիկ կազմի փոխակերպմանը, բնակչության թվաքանակի կրճատմանը, վերարտադրողական ցուցանիշների նվազմանը, սեռատարիքային կառուցվածքի փոփոխությանը և հայ բնակչության զանգվածային արտագաղթին:

Гаяне Оганнисян, ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ.

Цель данной статьи - представить демографические процессы в Нагорно-Карабахской Автономной Области во второй половине 1920-х гг. - в 1930-х гг. Для достижений этой цели мы поставили задачу изучить основные факторы, определяющие демографическую картину автономной области, представить их последствие и влияние на демографические процессы. В ходе исследования мы применяли много методов (анализ, обобщение, сравнение и сопоставление различных источников, архивных документов, пресс и других материалов).

Изучая тему, мы пришли к выводу, что во второй половине 1920-х гг. – в 1930-х гг. демографические процессы в автономной области были следствием с одной стороны демографической политики властей Азербайджана, а с другой стороны - социально-экономических, социально-политических процессов Советского Союза. В указанный период факторы, определяющие демографические процессы в области, сгруппированы в две части. Первая группа факторов - это меры, принимаемые властями Азербайджана. Эти меры включали сокращение территории области за счет административных изменений, образование тюрских поселений, меры направленные на ликвидацию кочевых поселений, переселение армянского населения в другие регионы по экономическими "обоснованиями", целенаправленное замедление социально-экономического развития области.

Вторая группа факторов была связана с социально-экономическими, социально-политическими процессами, охватившими весь Советский Союз. К ним относятся процессы коллективизации, индустриализации и репрессии в 1930-е годы.

Ключевые слова: демографические процессы, индустриализация, коллективизация, административные изменения, переселение, эмиграция, демографическая последствие.

Gayane Hovhannisyan, DEMOGRAPHIC PROCESSES OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S.

The purpose of this article is to present demographic processes in the Nagorno-Karabakh Autonomous Region in the second half of the 1920s – in the 1930s. To achieve this goal, we set the following tasks: to explore the main factors that determine the demographic picture of the autonomous region, to present their consequences and impact on demographic processes. During the research process, various methods were used, such as analysis, comparison and juxtapose of various sources, archival documents, press and other materials.

Exploring the subject-matter theme, we came to conclusion that the demographic processes of the autonomous region were a consequence of the demographic policy of the Azerbaijani authorities, as well as it was conditioned by the socio-economic and socio-political processes of the Soviet Union. In the second half of the 1920s – in the 1930s, the factors determining the demographic processes in the region are grouped into two parts. The first group of factors is the measures taken by the Azerbaijani authorities. These measures included the reduction of the region's territory due to administrative changes, the formation of Turkic settlements, measures aimed at eliminating nomadic settlements, the resettlement of the Armenian population to other regions for economic "justifications", a deliberate slowdown of the socio-economic development of the region. The second group of factors was associated with socio-economic, socio-political processes that engulfed the entire Soviet Union. These include the processes of collectivization, industrialization and repression in the 1930s.

Keywords: demographic processes, industrialization, collectivization, administrative changes, resettlement, emigration, demographic consequences.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան
խմբագիր՝ Միքայել Մալխասյան
Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200